

կարգենալին, որ այդ մասին իրեն զեկուցումն տայ, Առգան կարգինալի տուած զեկուցումն ամենէն նպաստաւոր չէ այդ խնդրին, սակայն պապը չէ կրտրել իւր յոյսը և չը նայելով Անդլիոյ կաթողիկոսներին հովուի խորհրդին, նա մտադիր է եպիսկոպոսական եկեղեցուն հրաւեր կարգալ և այդ հրաւերի մէջ հաւանութիւն տալ եպիսկոպոսական եկեղեցու ձեռնադրութեան առաքելական լինելուն, Այդ մասին պապը հրամայել է եկեղեցական խորհրդին հետազոտութիւններ անել և իրեն զեկուցանել:

Յ. Բ.



ՈՌՈՍԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

ԱՂԷՔՍԱՆԻՐ Գ. ԿԱՅՍԵՐ ԺԱՄԱՆԱԿ.



Սրոջեւոր Նիկոլայեւսկին ուսաց «Եկեղեցւոյ համաւարեր»-ի անցեալ 1894 թուի վերջին վեց համարներում մի ընդարձակ յօդուած է գետեղել, ուսաց եկեղեցու բարդաւաճման մասին ի Տէր հանգուցեալ Աղէքսանդր Գ-ի կայսերութեան շրջանում: Այդ յօդուածը, մանաւանդ նրա վերջին մասը, շատ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում ուս հոգեւորականութեան գործունէութեան մասին, որոնք անշուշտ շահեկան կը լինին նաև Արարատի ընթերցողների համար, ուստի և քաղուածօրէն առաջ ենք բերում այստեղ:

Ռուսաց եկեղեցին և հոգեւորականութիւնը հանգուցեալ կայսրի առանձին հոգածութեան առարկա է եղել միշտ, իսկ ուս հոգեւորականութիւնը մի այսպիսի զօրեղ հովանաւորի առաջնորդութեամբ աշխատել է ի դերն չհանել իւր վրայ գրուած յոյսերը:

Այդ զօրեղ շարժումից անմասն չէր մանաւանդ ամենազլատոր նպաստողն իսկ էր ուսաց սինոդը, որ 1881 թուի մարտի 1-ից յետոյ իւր շրջաբերականներով ուղղութիւն և ընթացք էր տալիս գործին, նրա օրինակին հետեւեցին նաև թեմական առաջնորդները, որոնք հովուական շրջաբերականներով խորհուրդներ սկսան տալ իրենց ստորադերձներին, քաջալերել և գործի հրաւիրել:

Այդ շրջանում ուս եկեղեցականները առանձին ուշադրութիւն դարձրին քարոզի վերայ, բազմաթիւ քարոզներ հրատարակեցան, քարոզը լրացուած էր և մամուլի մէջ, քարոզ էին ասում եկեղեցիներում թէ ժամատացութիւնից առաջ և թէ ժամատացութիւնից յետոյ, այդ բաւական չէ, քարոզներ էին ասում նաև եկեղեցուց դուրս, մասնաւոր աներում, ժողովարաններում, Եւ ժողովուրդը սիրով յաճախում էր այդ քարոզներին:

Բացի սրանից առանձին ընկերութիւններ կազմուեցան իրենց ընկերացիները և զբաղուեցան ներս անելու համար, Այդպիսի ընկերութիւնների մէջ աչքի է ընկնում Պետերբուրգի ընկերութիւնը, որ 1881 թ. ապրիլի 4-ին հիմնուեց, Այդ ընկերութիւնն արդէն երկու եկեղեցի ունի շինած, իսկ

նրանց մօտ էլ առանձին շինութիւն կրօնական ընթերցումներ, զրոյցների և ձրի գրագրանքի համար:

Հոգեւորականութիւնը իւր ուշադրութիւնը ամենից աւելի դարձրեց իրենց հոգեւորականութեան հոգեւորականութիւնը դեռ 1836 թուից Բարձրագոյն հրաւեր էր ստացել ամենայն տեղ եկեղ. — ծրական ուսումնարաններ բաց անելու և մինչև 1865 թիւր բաւական աջողութեամբ էլ գործն առաջ էր տանում: Բայց այդ թուից յետոյ հոգեւորականութեան ու լուսաւորութեան միջնորդութեան մէջ ծագած տարաձայնութիւնների պատճառով, հոգեւորականութեան ուսումնարանական գործունէութիւնը սահմանափակուեց, այնպէս որ 1865 թուին հոգեւորականութեան ձեռին գտնուած ուսումնարանների թուից, որ 21,000-ի էր հասնում 1881 թուին միայն 3000 էր մնացած: Բայց 1881 թուից հոգեւորականութիւնը հրաւեր ստացաւ ոչ միայն մասնակցել կրթական գործին, այլ և տիրապետող ազգեցութիւն ձեռք բերեց սաներին կրօնական ուղղութեամբ կրթելու համար, Թէև այդ ժամանակուայ լուսաւորութեան միջնորդ բարոն Նիկոլային դէմ էր այդպիսի ուղղութեան և միջնորդների խորհրդում աշխատում էր, որ կրօնի դաստատութիւնը աշխարհական ուսուցիչների և ուսուցչուհիների յանձնուի, բայց և այնպէս նրա առաջադրութիւնը մնաց առանց հետեւանքի և հոգեւորականութիւնը գերակիւ ազգեցութիւն ստացաւ: Այդ որոշումը հաստատուեց 1882 թուի յունուարի 26 Բարձրագոյն հրամանով և խնդրի մշակումը յանձնուեց ուսաց սինոդին: 1881 թուի յունուարի 13-ին Բարձրագոյն հաճութեամբ հաստատուեցան սինոդի մըշակած «Եկեղեցական ծխական ուսումնարանների կանոնները», որոնք անմիջապէս միաժամանակ գործ դրուեցան բոլոր թեմերում: Այդ կանոնները որոշում են եկեղ. — ծխական ուսումնարանների նպատակը, որ է հաւատոյ գիտելիքներ տալ աշակերտներին, Աւսումնարանները երկու կարգի են. միջառան — երկու տարուայ դասընթացով և երկրասեան — չորս տարուայ դասընթացով, Աւանդելի առարկաներն են 1) կրօն. — աղօթքներ, սուրբ գրոց պատմութիւն, ժամատացութեան բացատրութիւն և համառօտ հաւատապատում: 2) եկեղեցական երգեցողութիւն: 3) եկեղեցական և գործածական գրեանց ընթերցանութիւն և գրութիւն: 4) թուարանական տարրական ուսումն: Երկրասեան դպրոցներում բացի գրանից աւանդուած էր նաև Ռուսաց համառօտ պատմութիւն, Այդ բոլորի համար առանձին առանձին ծրագիրներ կան հրատարակուած, իսկ ուսումնարանների կազմակերպութիւնն ու առարկաների դասաւանդութիւնն ամբողջովին յանձնուած է հոգեւորականութեան և, մասամբ միայն հոգեւորականների որդոց, եթէ նրանք աւարտած էին որ և է հոգեւոր սեմինարիա կամ թեմական (արական կամ աղջկանց) ուսումնարան: Սակայն գործի աջողութեան համար հարկաւոր էր, որ դասատու հոգեւորականները գէթ մասամբ ծառօթ լինէին մանկավարժութեան, Եւ ահա որպէս զի հոգեւորականներից մանկավարժներ պատրաստուին, 1885 թուին սեմինարներին կից փորձնական տարրական դպրոցներ բացուեցան, ինչպէս և մի քանի աղջկանց թեմական ուսումնարաններին կից, ստորին կարգի եկեղեցական դպրոցներ հիմնուեցան: Մենայն նպատակով

զանազան թեմերում առանձին ուսուցչանոցներ բաց-
ուեցան և եկեղ—ծխական ուսումնարանների գա-
սատունների համաժողովներ կազմուեցան:

Բացի եկեղ—ծխական ուսումնարաններից
բացուեցան և բնակչությանը հարմար խնայող
ուսուցչանոցներ, որոնց նպատակն էր գիւղական մա-
նուկներին կարգաւորել և կրօնից տարրական գի-
տելիքներ սովորեցնել: Այդ ուսումնարաններում էլ
ուսուցիչները ուսուցանեցին հոգեւորականներն էին և շատ ան-
գամ էլ թերեւս պաշտօնավճող զինուորականներ: Թէեւ
գործը կարգէ կարգ էր գնում: Բայց և այնպէս հա-
սարակ ժողովուրդը համակրութեամբ էր վերաբեր-
ուում գէպի հոգեւորականութեան նոր ձեռնարկու-
թիւնը: որովհետեւ այս համայնքում էր ժողովուրդի
պահպանութիւնը: Այդ ուսումնարաններում բացառա-
նէր էր օրհարութիւնը: Եւ այնպէս էլ խնայող էր
(այդպէս անվճար էին նախապէս) որով նախ և ա-
ռաւ աշակերտներին ուսուցանում էին ժողովուրդի
տեղի և ցանկութիւնը: Ինքնաշնորհ էին աշակ-
երէն ինքնաշնորհ: Բայց այնպէս էր ժողովուրդի
ներս ուրախ էին: որ իրենց որդիքը ժամեն գնում
երգում են: կրօնական գրքեր կարդում:

Ուսուցման գործը փոքր ինչ կանոնաւորելու
նպատակով ուսաց սինոդը 1891 թուին առանձին
օրէնք հրատարակեց և կառավարութիւնն էլ աւե-
լացրեց իւր նիւթական նպաստը: 1885 թուին այդ ու-
սումնարաններին մատակարարած գումարը 525 000
ռուբլոյ էլ չէր հասնում: զորս մէջ հաշուելով
թէ կառավարութեան նշանակած նպաստը և թէ
միւս եկամուտը: մինչդեռ 1891 թուին ընդհանուր
եկամուտ եղել է 2 675 000 ռուբլի: այդ գումարից
207 000 ռուբլին ստացուած է յատուկ այդ նը-
պատակով եկեղեցիներում ժողովուրդը զանազան կից:
միւս զանազան կիցներից վերցրած 1 1/2-ից: գիւղա-
կան համայնքները տուել են 508 000 ռուբլուց ա-
ւելի: Բացի դրանից ձրիարար մատակարարել են շէնք:
վառելիք: ծառայ: քաղաքային խորհուրդները տը-
ուել են 39 000 ռ.: ծխական հոգաբարձութիւնը—
46 000 ռ.: շէնքերը—146 000: մասնաւոր մար-
դիկ—290 000 ռ.: ուսման վարձից գոյացել է
110 000 ռուբլի և կառավարութիւնը օժանդակու-
թիւն է տուել 175 000 ռ.: իսկ զեմստովյի հաս-
տատութիւն շուկեցող նահանգներից և Սիբիրից ըս-
տացուել է 286 285 ռուբլի:

Եկեղեցական ծխական և գրագիտութիւն
տարածող ուսումնարանները ենթարկուած են ուս-
աց սինոդի «Ուսումնարանական» Յանձնաժողովին:
Նահանգներում դրանց վերայ հսկողները թեմական
առաջնորդներն են և նրանց նախագահութեամբ
կազմուած թեմական ուսումնարանական խորհուրդ-
ներն ու այդ խորհրդի գաւառական ծիւղերը: որոնց
մասնակցութիւնն նա և աշխարհական մարդիկ: իսկ
ուսումնարանների անմիջական հսկողութիւնը յանձ-
նուած է տեղական քահանաներին: սակայն անցեալ
տարւանից սինոդը նշանակեց նաև յատուկ վերա-
հսկող պաշտօնեաներ: Անցեալ 1894 թուի յունիսի
13 ին լրացած եկեղեցական—ծխական ուսումնարան-
ների համար հրատարակուած կանոնադրութեան
առանձնական: Այդ միջոցին ուսումնարանների և
աշակերտների թիւը զգալի կերպով աւելացել էր:
մինչև 1884 թուին 4 547 ուսումնարան կար և
105 150 աշակերտ (տղայ և աղջիկ): 1894 թուին
ուսումնարանների թիւը հասաւ 29 488-ի (12 262ը
եկեղեցական—ծխական էր: 16 901-ը—գրագիտու-

թեման ուսումնարան և 325-ը—միսիոնարական: իսկ
աշակերտների թիւը—900 088: (490 000 եկեղեցա-
կան ծխակ: 401 902-ը—գրագիտական և 8 100-ը
—միսիոնարական ուսումնարաններում):

Հաշուից երևում է: որ 1891 թուին եկեղե-
ցական—ծխական ուսումնարանների աշակերտներից
իւրաքանչիւր հազար ուսուի վրայ գալիս էր 7 1/2
հոգի: իսկ հաշուելով նաև լուսաւորութեան մի-
նիստրութեան ձեռնի եղած ուսումնարանները՝ 1000
հոգուն 55 հոգի: 1887 թուին 17 795 ծխերում
ոչ մի եկեղեցական—ծխական ուսումնարան չէ ե-
ղել: Այժմ է ընկնում ուսումնարան յաճախող
աղջկանց թիւի պակասութիւնը: աշակերտուհիների
թիւը 1890 թուին եղել է բոլոր աշակերտների
13 1/2 տոկոսը: և աշակերտական հասակ ունեցող
աղջկանցից 95 1/2-ը ուսումնազուրկ է մնալու եղել:

Ուսու հոգեւորականութիւնը վերջին հնգետա-
սանամեակում առանձին եռանդ ցոյց տուեց նա և
միւս: Եւ այնպէս էր: որի նպատակն էր Ռուսիայի
այլալիքներին և այլադաւաններին միացնել ուս-
ական եկեղեցու հետ: Դեռ 300 տարի առաջ
ուսուները սկսան զանազան կոպաշտ ազգերի մէջ
տարածել ուսադաւանութիւնը: սակայն մի զգալի
առաջադիմութիւն չէին գործել: Սիբիրի խորրդների
բուրխաններից: թուրքուղիներից և այլ ցեղերից չեն
ընդունել: իսկ ընդունողներն էլ միայն անուշով են
քրիստոնէյ և շատ հեշտութեամբ յարում են
լուսնայինութեան: Եւ այնպէս էր: Ռուս միսիո-
նարներին մեծապէս արգելք են լինում լամաները
(բուդդայականութեան քարոզիչներ): որոնք մօտ
մի դար առաջ երևան գալով: մինչև այժմ շարու-
նակում են իրենց գործը: նրանց թիւը ստուարանում
է Մոկովիայից և Թիբեթից եկող լամաներով: Թէեւ
կառավարութիւնը արգելած էր այնպէս (կոս-
տոն) գոյութիւնը: բայց և այնպէս դեռ շատ տե-
ղեր կարելի է տեսնել զրանցից: Լամաներին մեծա-
պէս նպաստում են տալաները—գիւղապետները: ո-
րոնք ճշնշում են բանեցնում քրիստոնէութիւնը ըն-
դունողների վրայ: աշխատում են նրանց ամենայն
կերպ հեռացնել քրիստոնէութիւնից: նրանց զրկում
են ժառանգութեան և ընտրական իրաւունքներից:
արգելք են լինում նրանց գաղթաւոր կեանքը նըս-
տակեացի փոփոխելուն: մանուկ սերնդի մէջ անե-
լութիւն են սերմանում գէպի քրիստոնէութիւնը:
սովորեցնում են թիբեթական և մոնղոլական գրագի-
տութիւն: Հուրջամուրեան նահանգներում միսիո-
նարների գործունէութեան արգելադրութիւնն հան-
գիստում նաև չինացի եկուորները: որոնք բնիկ-
ներին հաւատացնելով: թէ նրանք չինահայատակ են:
գրգռում են դիմաւորել ուսաց և հետեւել իրենց
պապական կրօնին ու աւանդութիւններին: Այնպէս
որ ուսու միսիոնարները ստիպուած են մի կողմից
մաքառել: տեղական անտիպապաշտութիւնների գէմ
իսկ միւս կողմից էլ յամառ կոխ մղել բուդդայա-
կանութեան գէմ: Սակայն չնայելով այդ բոլորին:
ուսու միսիոնարները 11 տարուայ ընթացքում (մին-
չև 1892 թուին) կարողացել են ամբողջ Ռուսիա-
յում 43 501 կոպաշտ քրիստոնէութեան դարձ-
նել:

Ռուս միսիոնարների գործը պակաս դժուարին
չէ նաև մահմեդականների մէջ: զի սուրապէս Հուրջ-

վորդեան նահանգներում, Առկասում և Միջին Ասիական երկրներում, Այստեղ միսիոներների գործը շատ պիտու է նաև այն պատճառով, որ մահմեական հոգևորականությունը մի կազմակերպության մարմին է, էլ չենք ասում բուն մահմեականությունը, որ անհաշտ թշնամի է քրիստոնեությանը, 1879—1882 թվականներին մահմեականությունը Աֆայի և Վազանի նահանգներում, իսկ վերջերս նա և Օրենբուրգի նահանգում կազմակերպության շարժում սկսեց քրիստոնեականության դեմ, քիչ չեն գեպերը որ քրիստոնեայ մկրտած մահմեականները կրկին իրեն առաջուայ կրոնին են դառնում, Սակայն եթե ռուս հոգևորականությունը մահմեականների մեջ փոքր ինչ աջողություն է գրտնում, այդ էլ Եւրոպական Ռուսիայում, գլխաւորապէս Վազանի նահանգում և շրջակայքումն է, Պատճառը շատ պարզ է, այդտեղ միսիոնարական գործն աւելի պատրաստուած է քարոզչութեան համար, Այսպէս օրինակ մահմեականների մեջ քրիստոնեությունը աւարածելու մտքով Վազանի հոգևոր սեմինարիային կից բացուած կայ միսիոնարական բաժանմունք, 1865 թուին հիմնուած է նա և մի կեդրոնական ուսումնարան մկրտուած մահմեականների տղերանց ու աղջկանց դաստիարակութեան համար, նոյն նպատակին է ծառայում նաև Վազանի ուսուցչական սեմինարը և 1867 թուին հիմնուած մի ընկերություն, որ այլազգիների համար տարրական ուսումնարաններ է բաց անում, այդ ուսումնարանների թիւը 1884 թուին հասնում էր 135-ի, 5 081 աշակերտով, Ռուս հոգևորականությունը տեսնելով, որ իւր ոյժերով չէ կարողանում յաջողել մահմեականների մեջ, դիմեց մարմնաւոր իշխանութեան ինդերնով, որ մուֆտիի պաշտօնը և մահմեականների ժողովները խափանուին, մզկիթների և մօլլաների թիւը քաջանեն, մօլլաներին արգելուի այլազգի մանկանց կրթել, խառն ամուսնութիւններ կատարել, առաջարկեց այլազգիների մեջ դուստրըրը նակցներ և գիւղական վարչութեան անգամները կառավարութեան կողմից նշանակել:

Առկասի և Անդրկովկասի մահմեականների մեջ ռուս հոգևորականութիւնն աջողութիւն չունի, ինչպէս և Ռուբրեստանում, Այդ պատճառով էլ ռուր ռուսադաւանութիւն ընդունող մահմեականների թիւը հազիւ եօթը հազարի է հասնում:

Ռուս հոգևորականութիւնն առանձին եռանդ է ցոյց տուել ռուս աղանդաւորների դէմ գործելիս 1883 թուին մայիսի 3 ին հրատարակուած օրէնքով ռուս հերձուածողներին (ռասկոլնիկ) բաւական իրաւունքներ էին տրուում որից նրանք աշխատեցին օգտուել և օգտուեցին էլ Սակայն ռուս հոգևորականութիւնը նկատելով այդ առանձին միջոցներ մշակեց նրանց դէմ կռուելու համար, իսկ 1888 թուին ռուսաց Սինոդը, յատուկ կանոններ հրատարակեց միևնոյն իմաստով, Մարմնաւոր իշխանութիւնը միշտ թե և թիկունք էր հոգևորականութեան, ոչինչ ջանք և միջոց չէր խնայում այդ նպատակին հասնելու համար:

Ռուս հոգևորականութիւնը միևնոյն եռանդն արտայայտեց նաև ուրիշ աղանդաւորների դէմ գործելիս, մանաւանդ որ ռուս աղանդները վերջին տասնամեակում առանձին կենսունակութիւն ցոյց տուին, ընդարձակ ծաւալ ստացան նա և այնպիսի տեղերում ուր առաջ գոյութիւն անգամ չունէին, Այդ աղանդների դէմ կռուելը մանաւանդ դժուար

է այն պատճառով, որ նրանց վարդապետութեան մէջ, «Եկեղ. Համբ.», ի տեսելով, խառն են զանազան տարրեր, — կրօնական, եկեղեցական, բարոյական, տնտեսական, քաղաքական, — և այդ աղանդներին մասնակցում են և բարձր ազնուկաններ — Պաշկով, բարոն Աորֆ, և և յայտնի հեղինակներ — կոմս Լ. Ն. Տոլստոյ, և քաղաքացիներ ու շինականներ — Սիւտայկա, Պաւլով, Ռագուշնոյ, Ռիաբոչայկա, բայց որ գլխաւորն է՝ աղանդաւորների մէջ բուն ոչ միայն դուստներ, այլ և օտարերկրացիներ, ինչպէս են Բոնիկեմպեար, Օնկէնը, Վիլլետը և ինչ, Բացի ի վաղուց յայտնի աղանդներից վերջին տասնամեակում երևան եկան նա և նոր աղանդներ՝ Պաշկովչինա, տոլստովչինա, շտունգիզմ, բապտիզմ:

Այս բոլոր աղանդներն առանձին հոգս են պատճառում հոգևորականութեան և կառավարութեան նա և այն պատճառով, որ գրանց առաջնորդները միմեանց հետ կապեր ունին, համաժողովներ են գումարում մի հոգով և միացած ոյժով գործելու համար, և նրանք աջողութիւն էլ գտնում են իրենց կողմը գրաւելով ուրիշ աղանդաւորներ, ինչպէս են իւլյանսկի, շապուխտսկի, մուսկուլսկի, մինչև անգամ — օւլիկի, նրանք ձգտում են ի մի ձուլել բոլոր աղանդաւորներին:

Բնականաբար ռուսաց հոգևորականութիւնը վճռական միջոցների գիմեց այդ բոլորի առաջն առնելու համար և, ինչպէս երևում է, իւր ջանքերն ապարդիւն չեն մնացել, 1881—1892 թուերին միայն ռուս հերձուածողներից օրթողքս եկեղեցու գիրկն են դիմել 58 518 հոգի:

Ռուսաց հոգևորականութեան միսիոնարական գործն այսքանով չվերջացաւ, ուշադրութեան էին առնուած նա և Ռուսիայի արեւմտեան նահանգների այլադաւանները, Էուրջրալութեան նազանդներում 1883 թուին գէպի ռուսաց եկեղեցու գիրկը դիմելու առանձին շարժում երևան եկաւ նախ լուիսկի, Էստերի, ապա և Իստիշների և Լետտերի մէջ, այնպէս որ 1883—1891 թուերին ռուսադաւանութիւն ընդունողների թիւը հասաւ 20 000-ի, Ի հարկէ, տեղական լութերական պատտօններն ու բարոնները ջանացին արգելք լինել այդ շարժման, բայց աջողութիւն չգտան, նոյն իսկ Զուիցերիայի աւետարանական դաշնակցութիւնը 1887 թուին թագաւոր Այսրին բողոք ներկայացրեց Էուրջրալտեան նահանգներում կրօնական ազատութիւնը ոտնհար լինելու մասին, Այդ բողոքին պատասխանեց ռուսաց սինոդի Էֆէ—գլուխը, որ բացասելով Ռուսիայի ներքին պետական և եկեղեցական խնդիրները միջազգային խնդիր դարձնելու իրաւունքը, պնդում է, թէ «Եւրոպայում ոչ մի տեղ այլադաւան, նոյն իսկ այլակրօն ազգերն այնպիսի ընդարձակ իրաւունքներ չեն վայելում, ինչպէս ռուս ժողովրդի մէջ», Միևնոյն ժամանակ պատասխանի մէջ յիշուած է, թէ ինչպէս լութերականութիւնը կրօնականի դիմակի տակ աշխարհական ձգտումներ ունի:

Մի այսպիսի յարաբերութիւն կայ նա և ռուս ու կաթոլիկ հոգևորականութեան միջև Ռուսիայի արեւմտեան և Էուրջրալտեան նահանգներում ուր լատինականութիւնը թշնամական գիրք է բռնել գէպի ռուս եկեղեցին, Հասարակ ժողովուրդը չէ խորշում ռուս հոգևորականութիւնից, շատ անգամ նա նոյն իսկ ռուս հոգևորականներին է դիմում իւր հոգևոր պէտքերը հոգալու համար, լեհացի կալուածատէրները, լուիսկի, և կղերականներն են,

որ թնշամութիւն են սերմանում: Աղբերի գաղանիկ երբեմն էլ յայանի գրգռումները աւելի արտայայտուեցան 1883 և 1889 թուին, երբ կաթոլիկ եպիսկոպոսներն անգամ պրոպագանդա էին անում գրքոյիներ տարածում՝ «ուսարաւանութեան դէմ ուղղուած»։ Նոյն իսկ արքեպիսկոսն էր Տիմոնեան անմիջ ընկերութիւնները կաթոլիկութիւն քարոզելու միջոց դարձան, բացի այս ամենից՝ գիշերաւորն գաղանիկ ժողովներ էին կազմուում նախ եկեղեցական, ապա և հակակառաւարական լեհական երգեր երգելու: զբոյցներ անելու համար, Աղբեր կաններն առաւելապէս իրենց քարոզութիւնների յարմար միջոց ընտրել էին խոստովանութիւնը, ներքանք խոսիւ պահանջուէին որ կաթոլիկ ուսաղիկի չառնէ, թէ և շատ էլ դէմ էին, եթէ ուսար կաթոլիկ աղջիկ ուղկու լինէր, նրանք շատ լաւ զգում էին, թէ կանանց վրայ աւելի հեշտ է ազդել և նրանց միջոցով իրենց գաղափարները տարածել: Աթոլիկ հոգեւորականութիւնը շատ անգամ մերժում էր խառն ամուսնութեան համար, ծննդական վկայական տալ, բանագորութիւն ուսներին մօտ ծառայութեան մանող կաթոլիկներին (՞)։ Այնուհետեւ, յայանի բողոքներն եղան ուսար թէ եկեղեցական և թէ պետական ուսումնարանների դէմ, թէ լատին երեխաներին Ասարի համար յօրինուած աղօթքն են սօփօրեցնում: շատ տեղ լատին դիմանալիսները կայսերական մաղթանքներին ուսներին հետ միասին չեն ներկայ լինում ալ իրենց եկեղեցիներն են յաճախում, երեւան եկան նա և լեհական ուսումնարաներ, լեհական հոգին զօրացնելու համար, Աթոլիկ կղերի գաղանիկ պրոպագանդան աւելի երեւան եկաւ այն գիւղերում ու ծխերում ուր ժողովուրդը միայն պաշտօնապէս ուսարաւան էր ծանաչում կամ պարտաւոր էր ուսարաւան մնալու, թէ և իրապէս լատին էր, իսկ ոմանք էլ թէ և կատարում են ուս եկեղեցու ծէսերը, բայց անկեղծ էին և հակումն ունէին դէպի լատինականութիւն: Այդպիսի ծուխերը 60 ական թուականներին վարչական կարգադրութեանն են ուսարաւանութեան դարձրած՝ առանց ուս հոգեւորականութեան մօնակցութեան: Միևնոյն երեւթիւն է նաև Խոյմի միստարների (ուներստ) մէջ, որոնց 1875 թուին միացրին ուսարաւանութեան: Դրանց մէջ գլխաւորապէս գործում են Գալիցիայի յիսուսեանները, Առաւալարութիւնը վարչական խիստ միջոցներ է ձեռք առել այդ շարժման առաջն առնելու համար, նա և հսկողութիւն ունի կաթոլիկ հոգեւորականութեան գործունէութեան վրայ, խառն ամուսնութիւնների համար վկայականը փոխանակ կաթոլիկ հոգեւորականութիւնից ստանալու, ուսերկանութիւնն է աւելի: 1892 թուի ապրիլի 3-ի հրատարակուած ժամանակաւոր կանոնների զօրութեամբ կաթոլիկ հոգեւորականութիւնը գաղտնի ուսուցման համար ենթարկուում է 3 ամսուայ բանտարկութեան կամ մինչև 300 ֆ. տուգանքի, Բացի դրանից փոխուեցան մի քանի կաթոլիկական վանքեր և եկեղեցիներ, որոնք յանձնուեցան ուսարաւաններին, Եւ այդպիսով ուս հոգեւորականութեանը աշտուեց վերջին տասնամիակի ընթացքում մօտ 15,000 հոգի կորզել կաթոլիկութեան ձեռքից, Ռուսիա գաղթած ցեղերի մէջ ևս շարժում երևաց և նրանցից 9000 հոգի ուսարաւանութիւն ընդունեցին 1888—1891 թ. ընթացքում:

Ահա որանք են ի Տէր Հանգուցեայ Ապարի թա-

գալորութեան օրով ուսաց եկեղեցական կեանքի
դիմաւոր գծերը, Մենք չմիշեցինք, որ այդ միջոցին
ուսաց նոր լծակներ հաստատուեցան, եպիսկոպոսնե-
րի իրաւունքներն ընդարձակուեցան, եպիսկոպոսա-
կան համագումարներն եղան իւրաքանչիւր տեղի ե-
կեղեցական կարիքները քննելու և պարզելու նպա-
տակով, նոր եկեղեցիներ ու միաբանութիւններ
հիմնուեցան, հոգևորականութեան գրութիւնն ապա-
հայելու փորձեր եղան, հոգևոր գպրանոցների ծրա-
գիրներն փոփոխուեցան և նրանց աշակերտների իրա-
ւունքներն ընդլայնուեցան մանրերը բարձրացան և
բարեգործական և ուսումնարանական գործունեու-
թեան հրապրուեցան:

ՊԱՆՆԱԿԱՆ.



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԵՏՄԵԿԱՆ

ԱՌԱՆՆԵՐ ՏՐԱՊԵՉՈՆԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻՈՅ
ԲԱՐԵԱՌՈՎ:

Անէն ցաւի կու, բոքը արեւին էրեւոյր աստին (ա-
սացին) խլարին ' էն էլ քերօնը ' էրաց:

Աղջիկ, քեզիկի կասիմ: հայս, դուն օկոնջ էրէ (լսէ):

Այլին կաշի տուին հապ էնուշի՝, կերաւ, ուր էմնդին տեղ (աշխատանքի փոխարէն) հարպից (հաշուեց):

Աշխարհքս ի՞նչո (հրաշխ) գիտիս, — քեզիկի լումօն (նման):

Աշէ (շայէ, պահպանէ) երգող ¹ (երգն) օր երգող էւ աշէ
քեզի:

Աջաող վիր՝ վէյցնին՝ տակը հոշտ (հորթ) մօն կուգօն
(կորուննն):

Աստուած սարին կաշէ, ծունը դնէ կու:

Ասեղը քեզիկի՝ մախաթը ինձիկի խոթէ:

Առնկող էշդալ (երթալ) մի:

Բերօնը տոպուակ չէ, օր կապիմ: ազգրիմ (արծակեմ):

Գնչով տուին, պոչով հոնեցին:

Դեղացիին մեռնի, կենե՛ք ուր եղին կաշին մնալու, քաղ-
քըցուն ի՛նչ մնալու:

ԳԵՆՐ ՕՄԻԱՍ ՕՐՐՆ ՍԻՐԷՆ ԿՈՆ:

Դիխունն է զարկ. վայ կոնակս, ասաց:

Գեղացիք օր կողնեցօն (կանգնիւ) քիրիչ (մեծ գերան) կտորին կու:

Դոյտը (գորտ) ստաց. — խաղ շատ գիտիմ, ինչոք էնիմ որ
քերօնս ջուր լիքն է:

Դոնաւը ամնուշ էկուշի, եիզը հօնին կու գերեկը:

Դօնկի կտրածը պէտքընասու, լիզուի կտրածը պէտքը-
նաւ չի:

Դուն մէկ առուարի (առ եւ արի), եիս էրկուս:

Եմենին (սոլ) չարոխին (տրեխ) ասաց. — եիս քառսուն
կորալ կերպ. էմեն (այնպէս) ղերեկը էլայ:

Եհս աղա, դուն աղա, մեր աշուր վճիվ կաղաց:

Սիւ հասկնցայ թէ տէրը եկաւ, դուն ասիւ մի գէլը եկաւ:
Ձիւզողո՞ր (շարակաւո՞ր) ուրբիւր սկսեցին: ասաց: - Ի՞նչո՞ր

Եծը նրբոր (ուր) էշտայ, օլախն (ու) էլ հիտը կհշտայ:

Ս. ՀԱՅԳՈՒՆԻ

1, Յիմար, խելացնոր: 2, Փոխանակ = ի = կրնայուի: 3,

Անդժմ բայերու անորիշ դերբային ա, ե, ի, ու վերջա-
տրու/թիւններն ա, կր հնչուին: Վ, է եւ ի ճամնատրոններն

իրար հետ մի անգամէն պիտի հնչուի: 5, 6 ի տեղ ի դժբ-
ուամբ: 6, Փոփանակ: 7, Ի իւր Տարի: 7, Բարեկարգ: 8, Երաշխան

միշտ չի փոխուում: